1920

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

Հայոց լեռներ սև-սև ամպեր
Կուտակվել են, փաթաթվել,
Հայոց լեռներ սեգ-սեգ խըմբեր,
Գոռ գընդեր են ողջ պատել։

5 – Ո՞վ է կանգնած լեռների հետ
Էն հըզորը անսասան.
Ծածանում է գըլխին վետ-վետ
Իր դըրոշը սրբազան։

– Էն Սասունցի Դավիթն է հին,
10 Մըսրա շըղթան խորտակել,
Թուր-Կայծակին իրեն ձեռին՝
Լույս աշխարհ է դուրս եկել։

Հայոց մըթին լեռների հետ
Նա է կանգնած անսասան,
15 Ծածանում է գըլխին վետ-վետ
Հայոց դըրոշը սրբազան։

Էլ ո՞ր հավքը կանցնի թևով
Էն լեռների մութ շարքից,
Ո՞ր թշնամին կանցնի կենդան
20 Դավթի զորքից ու զարկից։

Հայոց լեռներ սև-սև ամպեր
Կուտակվել են, փաթաթվել,
Հայոց լեռներ սեգ-սեգ խըմբեր
Գոռ գընդեր են ողջ պատել։